ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«16» նոյեմբերի 2016 թվականի № 113-Ա

ՍՏՈՒԳՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 20.10.2016թ. թիվ 200018 ստուգման հանձնարարագրի հիման վրա <<Արարատցեմենտ>> ՓԲԸ-ում իրականացվող ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել <<Արարատցեմենտ>> ՓԲԸ-ում ստուգման ընթացքը, մինչև ստուգման անհնարինությունն առաջացնող փաստական հանգամանքների վերացումը, բայց ոչ ավելի քան օրենքով սահմանված ժամկետի ավարտը:
2. Աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետին. ստուգումը կասեցնելու մասին ծանուցել <<Արարատցեմենտ>> ՓԲԸ-ին:
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

Հիմք՝ 14.11.2016 թվականի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին ուղղված աշխատակազմի ընդերքի տեսչության պետ-ՀՀ ընդերքի գլխավոր պետական տեսուչ՝ Ա. Այվազյանի զեկուցագիրը :

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ